

‘Եթուլ լուանալուց յետոյ ամանները՝ պէտք է կանոնաւորապէս մաքրել, որովհետեւ այդ նիւթերը անհանոյ համ են ունենում։ Աւելի յարմար է ժամանակ առ ժամանակ, մինչև իսկ ամէն օր, ամանները ենթարկել չափազանց շատ տարացրած գոլորշու (105—110°) աղգեցութեան, որը շոգեմերենայ կամ շոգեկաթսայ եղած տեղերում հեշտութեամբ կարելի է կատարել։ Շոգին խոզանակից և ջրից անհամեմատ աւելի լաւ կարող է մտնել ամանների ծակ ու ծուկերը և ոչնչացնել այնտեղ եղած անմաքրութիւնները, սունկերը։’

Ամանները մաքրելուց յետոյ (մանաւանդ փայտեայ ամանները) պէտք է լաւ չորացնել։ Հակառակ դէպքում հեշտութեամբ մքլահոտ են ստանում, որ ոչ միայն կաթին, ուրին և նոցանից ստացուած այլ կերակրեղիններին է վնասում, այլ և սունկերի զարգացմանը նպաստում է։



## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՓ

Կատարելագործուած հեռախօս։ — Ամերիկացի Պուպին պլրո-ֆեսոսը մի քանի ժամանակ աւագ հետևեալ նշանաւոր գիւտն արաւ։ Մինչև այժմ մարդուս ձայնը հեռախօսով միայն որոշեալ հեռաւորութեան վրայ էր հաղորդուում։ Որովհետեւ պղնձեայ հազորդիչները, որոնց միջով անցնում է էլեքտրական հոսանքը, կլանում են նրա էներգիայի մի մասը և որբան երկար է լինում հաղորդիչը, այնքան աւելի են կլանում հոսանքի էներգիայից։ Քանի որ հեռախօսով խօսելու համար շատ թոյլ հոսանք է դործածւում, ուստի համեմատաբար կարճ տարածութեան վրայ նրա թուլանալը շատ զգալի է դառնում։ այս հոսանքները այլ և անկարող են հանդիսանում պահանջուած ոյժով ճօճել ընդունող ապարատի ծովեկը։ որու հետեւանքը լինում է այն, որ ձայնը քանի դնում թուլանում է, անորոշ է դառնում։ Զրի տակի հեռախօսով միայն 30—40 վերստ հեռաւորութեան վրայ քառերը պարզութեամբ լսուում են. նույնի գետնի վրայի հաղորդիչները մինչև 1000—1200 վերստ հեռաւորութեան վրայ քառերը

որոշ—որոշ կհաղորդեն, եթէ միայն ապպարատները շատ զդաւ յուն են: Սորանից փոքր ինչ պակաս հեռաւորութիւն ունի եւրոպայի ամենաերկար հեռախօսային հազորդակցութիւնը՝ Իերլինի և Փարիզի միջև: Պրոֆեսոր Պուլինի կատարելագործման նպատակն է հազորդիչների ընդգեմագրութիւնը ոչչացնել, իսկ եթէ այդ անհնարին լինի, դէթ ամենամեծ չափով թուլացնել: Արդէն մի ընկերութիւն գիւտ անողից իրաւունք է առել Եւրոպական տէրութիւնների մէջ նոր ձեր հեռախօսներ մացնելու, և մի քանի փորձեր կատարուել են, որոնք ամենափայլուն հետեւանքներ են ունեցել: Չայները այժմեան հեռախօսի հազորդագրից 4—5 անգամ աւելի ուժգնութեամբ են հազորդւում: այս հանդամանքը հնարաւորութիւն է տալիս հեռախօսի ծայրերի միմեանցից ունեցած հեռաւորութիւնը 4 կամ հինգ անգամ մեծացնելու:

Արդ, ի նկատի ունենալով, որ ներկայումս ամենաերկար հեռախօսի գիծը 1200 վերսա երկարութիւնն ունի՝ եզր նոր ձեր հեռախօսի գծեր շնուռեն, կարելի կլինի ուրեմն Պետերբուրգը միացնել Մալթիկի, Կ. Պոլսի և Կալկաթայի հետ: իսկ Լոնդոնը կապշտագի հետ (հարաւային Աֆրիկայի ծայրին): Եւրոպայում հեռախօսի հազորդակցութիւն կարելի է հաստատել բոլոր քաղաքների մէջ, որքան էլ նրանք իրարից հեռու լինին: Եթէ հնարաւոր կլինի սոյն կատարելագործութիւնը յարմարեցնել նաև ջրի տակի հազորդիչ կարելներին, այն ժամանակ Եւրոպայի ընակեցները կկարողանան խօսել ամերիկացիների հետ:

Քրիստափոր Կոլումբոսի նշարների վերջին քայլումը Տեղի ունեցաւ Սեվիլիայում նոյնիմբեր ամսին:—Ռ' է թէ հաշակաւոք ծավագնացի ոսկուները, բազմաթիւ տեղափոխութիւններից յետոյ ի վերջոյ այստեղ հանդստանան:

Քր. Կոլումբոսը մեռել է 1506 թուի մայիսի 20-ին և թաղուել է Վալեագուիգում: Խօթը տարուց յետոյ նրա մարմինը գերեզմանից հանում են և տեղափոխում Սեվիլիայի մօտ դըտնուող Լաս—Վուելվասի վանքը: 1536 թուին հանդուցեալի վերջին կամքը կատարելու համար նրա ոսկորները տանում են Ատլանտեան ովկիանոսի միւս կողմը և թաղում Սան—Դոմինգոյի մայք տաճարում: որ և այնաեղ երկու և իկս դար շարունակ խաղաղ հանդչում էին: Քրանուխական Մեծ յեղափոխութեան ժամանակ Քրանուխացիք կղզու մի մասը դրաւեցին, Կոլումբոսի օսկորները հանեցին և երկու մասի բաժանեցին՝ մի մասը դարձեալ նոյն տե-

դում թաղեցին իսկ միւս մասը տարան կուբա կզզին և Սանտ  
— Եագօյի մայր տաճարում թաղեցին Հարիւր տարի յետոյ մեծ  
քենովացու ասկորների խաղաղութիւնը դարձեալ վրդովուեց:  
Երբ ամերիկացիք Առւբա կզզին Խլեցին սպանացիների ձեռքից,  
Քրիստավոր Առլումբոսի աճիւնը դարձեալ մի ճանապարհօրդու-  
թիւն կատարեց Առլանդեան ովլիանոսի վրայով Սանտ—Եագօ-  
յից գէսի Առլիլիա և այդաեղ հանդչում է այժմ:

Յդագնացներ.—1902 թուի գեկտեմբեր 1-ին երկու շվեդացի  
ոդադնացներ՝ Գալու Ֆրենկէլ և Լյուտենանտ Էրնստ Էնեսարիմ  
«Սվենսոկ» օդապարիկով մի բարեյաջող թռիչք կատարեցին Ստոր-  
հումից դէպի Ոռւսաստան, 24 ժամ շարունակ երկնքի և երկրի  
մէջ մնալով: Օդագնացներից առաջնը Անգրեյի հետ կորած օ-  
դադնացի հարազատ եղբայրն է, որ մասնակցել է նաև Շպից-  
բերդինի էկոպեգիցիային՝ աստիճաններ որոշելու համար, և մի  
քանի անգամ օդային ճանապարհօրդութիւններ է կատարել Շվե-  
դիայից Ոռւսաստան: Ահա թէ ինչ է պատմում նա այս վերջին  
հետաքրքրական ճանապարհօրդութեան մտսին:

«Ստորհումից թռանք գեկտեմբերի 1-ին, կիրակի օրը, ճաշից  
յետոյ ուղիղ ժամի 5-ին: Օդապարիկի բարձրանալուն ներկայ էին  
շվեդական թագաժառանգ Գուստավը, օդադնացների ընկերու-  
թեան անդամներ և խուռն ամբոխ: Թռչելուց երկու րոպէ հա-  
զիւ էր անցել, որ մենք արդէն ամպերից բարձրացել էինք, այն-  
պէս որ հազիւ կարողացանք թռիչքի ուղղութիւնը որոշել: 360  
կելոգրամ (22½ ֆ.) աւելորդ ծանրութիւն էինք վերցրել, ուստի  
յոյս ունէինք Բալթիկ ծովին անցնել և Ոռւսաստանում իջնել:  
Մեղանից մէկը մթնոլորտաբանական գործիքներով գիտողութիւն-  
ներ էր անում: Խոր միւսը կառավարում էր օդապարիկն ուղղա-  
հայեաց դրութեամբ: Աւելորդ ծանրութիւնից աւելի կամ պա-  
կաս քանակութեամբ դուրս շպրտելով:

Ըուտով երեաց լուսինը և լուսաւորեց ամպերի ծովը:  
Մեր օդապարիկը հտմարեա թէ չէր ցածանում, ուստի և դա-  
դարեցրինք աւելորդ ծանրութիւններ դուրս նետել, այնպէս որ  
հերթով հսարաւոր եղաւ քնել: Ժամի 4-ին և 35 րոպէին Մեծ Եր-  
ջի համաստեղութեան ստորին աստղերի միջև արեւելքից դէպի  
արևմուտք մի վայր ընկնող ահագին աստղ տեսանքը որ վեց վայր-  
կեան շարունակ ցոլում էր: Մի րոպէից յետոյ մի ուրիշ վայր  
ընկնող աստղ երեաց, բայց առաջնից անհամեմատ փոքր էր: Ա-  
ռաւսութեան 7 ժամին ամպերի ճեղքուածներից պարզութեամբ  
կարողացանք որոշել ծովի ալիքները: այնուհետև օդապարիկն

ուղղեցինք դէպի հարաւ—արևելք, Մօս ժամի 12-ին մեր ներքեւ տեսանք երկիրը իսկ մի քիչ անցնելուց յետոյ լոեցինք շողեկառաքի սուլոցն ու շների հաջոցը։ Մօս ժամին 5-ին օդապարիկը կորցրեց վերամբարձ ոյժն և սկսեց կամաց—կումաց յած իջնել։ Մենք էլ չուղեցինք նրա իջնելուն դիմագրքերը քանի որ միայն երկու փութ անելորդ ծանրութիւն էր մնացել։ Աերջապէս յարմար վայրիկան ընօրեցինք և խարիսխ դուրս դցեցինք, որ եսկին կպաւ գետնեց և կանգնեցրեց օդապարիկը։

Օդապարիկը իջել էր Պակովի նահանգի Սոլցա գլուղից 4 վերստ հեռու, իջնելու ժամանակ օդապարիկը ինչպէս և նրա մէջ եղած դործիքները կատարելապէս անվնառ մնացին։ Օդադնացները երկրադնտի մակերևոյթին մօտիկ բարեխոռնութեան վերաբերեալ հետաքրքրական դիտողութիւններ են կատարել։ մինչ երկրի վրայ ջերմաչափը ցոյց էր տալիս—4° 8.։ 1000 մետր բարձրութեան վրայ սնդիկը բարձրացել է մինչև +4°։ Նման եւ ըսոյթ մի քանի օր առաջ նկատել էին նաև Պավլովսկի Կոստանդինովիկան դիտարանում, որտեղ թռուցիկների օդնութեամբ մթնալորտաբանական ինքնագիր դործիքներով օդում փորձեր են կատարուել։ Երկրի վրայ ջերմաչափը մի քանի առտիճան ցլուց իջել էր, այն ինչ 200 մետր բարձրութեան վրայ բարձրացել էր մինչև +8°։ Այս նոյն «Սվենսոկ» օդապարիկով վերոյիշեալ Ֆրէնկելը ուրիշ երկու օդագնացների հետ միասին ամառը մի բարեյաջաղաղ թռիչք էր կատարել Բալթիկ ծովի վրայով։ Ստոքհոլմից 14 ½ ժամուայ ընթացքում նրանք հասել են Իլմէն լճի ափերին։

Արհեստական կղզի.—Անգլիայում նորերո կազմուել է մի ակցիոներական ընկերութիւն, որի նպատակն է Ատլանտիկան ովկիանոսի մէջ, լիզար հրուանդանից (Անգլիայի հարաւ—արևմըտեան ծայրը) 100 մղոն հեռաւորութեան վրայ դէպի արևմուտք մի լողացող կայարան հիմնել։ Այս արհեստական կղզին մի քանի նպատակների կծառայէ։ այդտեղ կշինուի պոստ—հեռագրական կայարան, անցնող նաւերի կենսական մթերքներ կմատակարարէ։ մի խօսքով Անգլիայի համար առաջաւոր կենտրոն կլինի Հին և Նոր աշխարհի ծովային սահմանի վրայ։ Այս նպատակի համար կշինուի մի երկաթեայ բարժա։ որ չզթաներով ամրացրած կլինի։ Բարժայի մէջ 500 տօնն (30,000 վ.։) ծանրութիւն կտեղաւորուի։ Նաւի նախակայմի վրայ կշինուի Մարկոսի անթել

\* Հոգենաւերի վրայ ապրանք տեղափոխող կամ ընդունող նաւ։

հեռագիրն ընդունող ապակարատ : Ովկիանոսեան կայաբանը օգ-  
նութեան կգայ շատ նաւերի, որոնք այլ ևս ի զուր տեղ շատ  
ժամանակ չեն կորցնի՝ հրահանդներ ստանալու համար նաւահան-  
գիստներ մտնելով . միենոյն ժամանակ օգտակար կլինի նաև լրա-  
գիրների համար, որովհետեւ կհաջորդէ նրանց նաւերի երթեւեկու-  
թեան : ճանապարհորդների թուի մասին . Այն: Քացի որանից նա-  
կարող է յարմար ապատարար վայր լինել: Կայաբանը զօրեղ է-  
լեքտրական լապտերներով կլուսաւորուի և շինուած լինելով  
շընկղմուող նաւերի պէս, ոչ մառախուղեց կվնասուի և ոչ էլ  
փոթորիկներից: Քարժայի ջրի մէջ գտնուող մասը բաղկացած  
կլինի 2500 ջրի համար անթափանցելի միջնապատերից, որոնք  
կկազմուեն դատարկ տակառների շարքերից:

Մարկոնիի ձեռագիրը շահագործող ընկերութիւնը այս նոր  
ընկերութեան հետ համաձայնութեան է եկել և անթել հեռա-  
գրից օգտուելու համար նրանից կստանայ 50,000 քուրլի ամէն  
տարի: Եթէ այս ձեռնարկութիւնը յաջողութեամբ վերջանայ,  
այն ժամանակ մօտիկ ապագայում ովկիանոսները կծածկուեն  
ոյն տեսակ արհեստական կղզիների ցանցով:

Ելեքտրականութեան ազդեցութիւնը ինի վրայ.— Նորերս ֆրան-  
սիացի Ստեփան Լ. Դ. Դիւկ գիտնականը Փարբեզի գիտութիւնների  
ճեմարանում մի զեկուցում կարդաց այն փորձերի մասին, ո-  
րոնք կատարուել են էլեքտրականութեան քնի վրայ ունեցած  
ազդեցութիւնը որոշելու համար:

Դիտնականը կարողացաւ ապացուցանել, որ եթէ մարմնի  
մէջ ինչպէս հարկն է էլեքտրական հոսանք ներս թողնուի, ար-  
հետական քուն առաջ կգայ, որ ոչնչով չի զանգանուի քնա-  
կանից: Փորձերը դեռ ևս կենդանիների վրայ են կատարուել.  
մի շան վրայ հետևեալ փորձն է եղել. գլխի վրայ մի տեղ, որ  
առաջուց ածիլած էր, ի նկատի ունենալով ըրդի էլեքտրակա-  
նութեան համար վատ հաղորդէլ լինելը՝ դրին ձողիկ, որ մի  
ծայրով միացած էր մարտկոցի հետ, իսկ մետաղալարի միւս  
ծայրը գրին մէջքի վրայ: Հոսանքի ազդեցութեան տակ շունը  
առաջ ջղածգական շարժումներ էր անում և ապա համարեա-  
թէ բոլորովին գաղարեց շնչելուց. բայց յետոյ շնչառութիւնը  
կամաց-կամաց վերականգնեց. կենդանին հանդարտուեց և վեր-  
ջապէս ընական խոր քնի մէջ ընկաւ, որ մօտ 2 ժամ տեեցր-  
ելը հոսանքը կտրեցին, շունն իսկոյն զարթնեց, կանգնեց ոտ-  
ների վրայ և սկսեց աշխուժանալ. պարզ էր, որ երկարատև

Էլեքտրականութեան ազդեցութիւնը կենդանու մարմնի մէջ ոչ  
մի հիւանդու փոփոխութիւն առաջ չըերաւ:

Բանտարկուած օձերի կամաւոր բաղածութիւնը.—Վաղուց  
յայտնի է, որ շատ օձեր, որոնք աչքի են ընկնում իրանց շատակե-  
րութեամբ, ազատութիւնից զրկուելով՝ յամառութեամբ հրաժար-  
ւում են ամէն կերակրից, բայց զարմանալի կերպով գիմանում  
են երկարատև քաղցածութեան, և երբ մարմնի քաշը սրոշեալ չա-  
փից պակասում է՝ սատկում են: Ժենեվիցի Շօսայի փորձերից  
երեսում է, որ կենդանիները ընդհանրապէս, սովածութիւնից այն  
ժամանակ են սատկում, երբ սկզբնական ծանրութիւնից 40—  
50% պակասում է՝ սակայն Շօսան փորձերը կատարել է տա-  
քարիւն կենդանիների վրայ, Պելլեգրենի փորձերի համաձայն երբ  
օձերը բացարձակապէս քաղցած են մնում, այսինքն թէ՝ չոր և թէ  
հեղուկ կերակուբներից իսպառ հրաժարում են, այն ժամանակ  
մահը անխուսափելի է, եթէ սկզբնական քաշից 38% պակասում  
է. իսկ եթէ օձերը միմիայն չոր կերակրից են հրաժարում, բայց  
չուր խմում են, մահը վրայ է հասնում, երբ սկզբնական քաշից  
43% կորչում է, վերջին դէպքում կեանքի երկարատեսութիւնը  
երեք անգամ աւելի է: Մաղագասկարի մի օձ՝ Պելլեգրենի ասե-  
լով, չորս տարուց աւելի սոված մնաց: Ճափոնիայից 1899 թ.-ի  
նոյեմբերի 17-ին Փարիզի դազանանոց ըերին մի մեծ օձ, որի եր-  
կարութիւնն էր 6 մետր և 45 ստանտիմ. երկու տարի, հինգ ամիս  
և երեք օր տևող կամաւոր և յամառ քաղցածութիւնից յետոյ  
նա սատկեց 1902 թ. ապրիլի 20-ին. այս ժամանակ նրա սկզբ-  
նական ծանրութիւնը 75 կելոգրամից իջաւ մինչև 27: Ի դուր  
էին նրան ատլիս գտու, նապաստակ սագ, բագ, հաւ, նա ջար-  
դում էր նրանց իւր ռուժեղ օղակներով, բայց ամենավայրէ չէր ու-  
տում: Օձը քիչ—քիչ թուլացաւ, նրա փայլուն գոյնը սկսեց  
աղօտանալ, իսկ ծաւալը փոքրացաւ: 1902 թուի սկզբին նրանից  
միայն ոսկոր ու կաշի էր մնացել. նա այնուհետեւ կատարեալ  
անզգայութեան մէջ ընկաւ և կուչ եկած պառկեց վանդակի մի  
անկիւնում: Մի քանի անգամ փարձեցին նրան զօռով կերակրել,  
կոկորդի մէջ ծուեր գցեցին, բայց արդէն բանը բանից անցել էր:  
Աւելի յարմար ժամանակին զօրով կերակրեցին Նիւ-Նորկի կեն-  
դանարանական պարտիզում մի վիթխարի օձ, 8 մետր և 90  
ստանտիմետր երկարութեամբ. սա էլ յամառութեամբ հրաժար-  
ւում էր ըոլոր կերակուբներից: Խննը ժառայողներ օձին (որ կոչ-  
ում էր պիտօն) գուրս բերին վանդակից և ամուր ըռնած պա-  
հում էին, չթողնելով որ և է շարժում անել: Մառայողներից

մէկը պիտօնի բերանը զօռով բաց արեց իսկ մի ուրիշ զգուշութեամբ փայտով օձի կոկորդն էր տանում մանր կենդանիներ երբե կերակուր պիտօնը՝ ստեպուած եղաւ կամայ ակամայ երկու ճադար և երեք ծովային խող կուլ առաջ թէպէտ անչափ ջանք էր թափում ժառայողների ձեռքից ազատուելու որոնք գժուարութեամբ էին պահում նրան:

Ծովային վամփիր որսար.—Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափերի մօա ծովեզրեայ թնակիչները որսում են ծփային վամփիր կոմ սատանածուկ կոչուած տափածուկը, որի կենցազավարութիւնը և առանձնայտկութիւնները դեռ ևս կատարեւապէս ուսումնասմբուած չեն: Այս զարմանալի ձուկը վիթխարի մեծութիւն և ահագին ժանրութիւն ունի: Խողակի մի ժայրից մինչեւ միւսը երկարութիւնը 6 մետր է, երբեմն էլ մինչեւ 10 մետր: Քերանից մինչեւ պոչի հիմքը երկարութիւնը 4 մետրից աւելի է: իսկ պոչի երկարութիւնը համարմ է  $2\frac{1}{2}$ —3 մետրի Նթէ որս վրայ աւելացնենք և այս, որ տափածուկը մօտ  $1\frac{1}{2}$  մետր հաստութիւն ունի, այն ժամանակ գիւրին է հասկանալ, թէ ինչպէս այս հրէշը մօտաւորապէս 2,200 կիլոգրամ ժանրութիւն է ունենում: Գլխի վրայ աչքերի մօտ երկու պողոծե շօշափուկներ ունի նաև որոնցով սատանայի է նմտնում: Այս շօշափուկները մի մի մետր երկարութիւն ունին, անընդհան շարժողութեան մէջ են, ամէն մի շարժուող առարկայ կատաղութեամբ բռնում են և ձգում ձկան հոկայտական բերանը, որտեղ հեշտութեամբ մի մարդ կտեղաւորուի: Ծովային վամփիր որուալու ժամանակ վտանգներ կարող են պատահել: այս ուժեղ և մեծ կենդանին ջրից գուրս թռչելիս հեշտութեամբ կարող է նաւակներ շուռ տալ կամ մեծ ջրապտոյսների մէջ դցել, որոնց գոյանում են, եթի նա ուժգութեամբ ջրի մէջն է ընկնում: Աւատի որսորդները վամփիրներ որսալու համար առանձին տեսակ, յատկապէս այս նպատակի համար պատրաստած, նաւակներ են գործածում, որոնց ժայրերից օդով լի ցինկի թեզերուարներ կան կամ: զէսքերից վերցնում են իրանց հետ հարպուն, երկար լոմ և շատ խոշոր գանակներ: Հէնց որ ջրի տակը տափածուկի ու պատկերը յայտնուում է, իսկոյն նետում են հարպունը, որ շատ խորը մանում է նրա մարմնի մէջ: Կենդանին վանդից աղատուելու համար արագութեամբ լողում է գէպի բաց ծովը, իւը հիմ քաշ տալով նաւակն ու որսորդներին երբեմն մի քանի վերսու հեռաւորութեան վրայ: նա աշխատում է նաւակը ջրի

տակը տանել կամ շուռ տալ բայց ի զուր. ապա մոլեգնութեամբ ջրից շատ բարձր է թռչում և հենց այս վայրկեանին նրա բանը վերջանում է. շորս կողմից դանակներ են խրուտնքա մարմնի մէջ: Երկար կռուից, վերբերից և արիւնաքամ լինելուց բոլորովին ուժապառ եղած և թուլացած տափածուկը վայր է ընկնում ջրի մէջ. ապա նրան հանում են ծովափը:

### ՊԱՇՕՆԱԿԱՆ ՀԵՐԲՈՒՄՆ.

Մայր Աթոռիկ օրգան «Արարատ» ամսագրի 1901 թ. համարում մի պաշտօնական գրութիւն էր զետեղուած իրեն հրահանդ երեցիստանների համար: Հրահանդ հրատարակելու առիթը եղել է իմ 1901 թ. Մայիսի 23 ի № 17 Տփխիսի Հայոց Կոնսիստորիային ուղղած գրութիւնս, որոյ մասին յիշատակութիւն անգամ չկայ: Տփխիսի Կոնսիստորիայն մեղադրում է, ինձ, որ ես Մողնոյ եկեղ. մի միաբան քահանայի համար 130 ռ.ր. մի շուրջառ եմ կարել, իսկ միւս միաբանի համար որպէս թէ զլացել եմ 12 ռ.ր. Ճախաել: Տփխիսի Կոնսիստորիայն հիմնուելով Նիկիոյ և սուրբ Սահակի ժողովների կանոնների վրայ՝ հետեցնում է, որ ես իրեւ երեցիստան յայտնի ծախսեր անելու համար պիտի հրահանդուեի յիշեալ ժողովների կանոններով: Այն յենարանը, որի վրայ հասաւառւած են Կոնսիստորիայի եղբակացութիւնները, խախուտ է, բոլորովին և իսկապէս յինարան չէ այլ ես: Կոնսիստորիային յայտնի է, որ պատմական ընթացքով յիշեալ ժողովների կանոններին փոխարինել են նոր կանոններ. Կոնսիստորիայն քաջ գիտէ — վերև յիշած ժողովների կանոններն ամփոփուած են վերջին ժամանակներս հրատարակուած կանոնների մէջ, որը Պաշտենէ և կոչւում որի կանոնների կառագումը նոյն Կոնսիստորիայն ի պահանջել հարկին զէնք է ընդունում՝ խախի պահանջելով երեցիստաններից նրա իրագործումը, և որից նա ինքը հետեւարար խուսափելու իրաւունք